

Հայության կազմակերպման խնդիրները Հայկական հարցի արդի փուլում

Հայաստանի անկախացումից հետո Հայկական հարցը մտավ մի նոր՝ բարդ ու ծայրաստիճան անկայուն փուլի մեջ, որը պահանջում է հայության ամբողջ ներուժի լարումն ու շարժի ենթարկումը: Ներկա բարդագույն մարտահրավերներին պատասխաններ գտնելու և լուծումներ առաջարկելու փորձեր են արվում: Դրանցից մեկն էլ վերջերս ձեռնարկված միջոցառումներն են, որոնք նախատեսում են արտերկրում Արևմտյան Հայաստանի վտարանդի իշխանության հաստատում՝ արևմտահայերի ներկայացուցչական մարմինների (Ազգային ժողով և կառավարություն՝ «Ազգային խորհուրդ») ստեղծում: Նման նախաձեռնություններ արձանագրվել են ԱՄՆ-ում և Ֆրանսիայում: Այդ նախաձեռնություններից ամենավերջինը 2006 թվականի հոկտեմբերի 25-ին «Հայաստանի Հանրապետություն» և 31-ին «Գոլոս Արմենիի» թերթերում հրապարակված «Ուղերձն» էր, որը ստորագրել էին հայտնի մտավորականներ ու հասարակական գործիչներ, այդ թվում՝ Արա Աբրահամյանը, Նարեկ Աբրահամյանը, Արմեն Զիգարխանյանը, Սոս Սարգսյանը, Վահագն Դադրյանը, նույնիսկ պետական ու զինվորական պաշտոնյաներ՝ ԼՂՀ վարչապետն ու ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականը: Ու թեև վերջիններս շեշտել էին, որ այդ «Ուղերձն» ստորագրում են իբրև անհատ՝ «անձնական կարգով», սակայն հասկանալի է, որ առանց իրենց վերադասների համաձայնության՝ նման քայլի չէին դիմի, ինչն էլ ավելի լուրջ երանգ է հաղորդում այս նախաձեռնությանը:

Արևմտյան Հայաստանի տարագրության մեջ լիազոր ներկայացուցչություն հիմնելու խնդրով 2006 թվականի դեկտեմբերի 11-ին և 12-ին Փարիզում (Սևրում) կայացավ առաջին խորհրդակցությունը (այդ մասին տեղեկատվությունը տես «Զարթոնք», 5 հունվարի 2007թ., «Հայաստանի Հանրապետություն», 16 հունվարի 2007թ. և «Գոլոս Արմենիի», 20 հունվարի 2007թ.): Նախաձեռնությունն, իհարկե, հիմնականում պատկանում է սփյուռքի ներկայացուցիչներին:

Ո՞րն է խնդիրը:

Անվիճելի է, որ սփյուռքահայությունն անկազմակերպ ու, ըստ այդմ էլ, թույլ վիճակում է. քաղաքականապես ակտիվ ուժերը, ներառյալ ավանդական կուսակցություններն իրենց աշխատանքներում ներգրավում են հայության չնչին մասը միայն: Սփյուռքը կազմակերպելու, ներկայացուցչական մարմիններ ընտրելու, մշակված և ընդունված ծրագիր ու միասնական բյուջե ունենալու հրամայականը վաղուց է առկա: Սակայն Սփյուռքի այդ ճանապարհով կազմակերպումն ու հզորացումը մի խնդիր է և բոլորովին այլ բան՝ Հայաստանի մի մասի՝ Արևմտյան Հայաստանի վտարանդի իշխանության հիմնումը, որը, մեր համոզմամբ, սխալ ու վտանգավոր ուղի է:

«Ուղերձում» կան մասնավորապես մի քանի անընդունելի կետեր: Դրանցից մեկում նշվում է, որ «*համայն հայության հատվածների միջև պարտականությունների և գործողությունների դերաբաշխումը կնպաստի ազգային խնդիրների լուծման արդյունավետությանը, կօգնի իր հարևանների հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների կարգավորմանը, ինչը, իր հերթին, կնվազեցնի նրա կախումը աշխարհաքաղաքական հակամարտության հնարավոր*

հետևանքներից»։ Ընդամին՝ եթե Փարիզում, Մոսկվայում կամ Վաշինգտոնում Արևմտյան Հայաստանի կառավարությունը նիստ գումարի և, «պարտականությունների և գործողությունների դերաբաշխման» համաձայն, առաջ քաշի Արևմտյան Հայաստանի տարածքների վերադարձման կամ նյութական փոխհատուցումների հարցը, ապա Թուրքիան Հայաստանի Հանրապետությանը որևէ հարցում մեղադրել չի կարողանա։ Ասել է թե՛ ի՞նչ կապ ունի այստեղ ՀՀ-ը. չէ՞ որ նա չի բարձրացրել այս հարցը։ Իսկ ՀՀ կառավարությունը կզբաղվի միայն Արցախի հիմնահարցով և այլ խնդիրներով։

Սա բացահայտ միամտություն է։ Դեռ 2001-ին, երբ Ֆրանսիան Հայոց ցեղասպանության վերաբերյալ օրենք ընդունեց, Թուրքիայի պատասխան քայլը եղավ Հայաստանի դեմ՝ ՀՀ քաղաքացիների նկատմամբ վիզային ռեժիմի խստացման, օդային հաղորդակցության արգելափակման և նոր սպառնալիքների տեսքով։ Թուրքերը քաջ գիտակցում են, որ այս իրադրությունում առավել կարևորը Հայաստանի Հանրապետությունն է՝ իրական տարածքում գոյություն ունեցող պետությունը։ Այնպես որ, նմանատիպ «աճպարարական» հնարքները ոչ ոքի չեն կարող խաբել։ Թուրքիան նաև գիտակցում է, որ քանի կա Հայաստանի Հանրապետությունը և կա այդ հողում ապրող ժողովուրդ, իր համար սպառնալիքները (եթե ոչ ռազմական, ապա՝ դիվանագիտական, տեղեկատվական և այլ ճակատներում) հենց այդտեղից են բխելու։ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Ռուսաստանում և կամ այլուր բնակվող մեր հայրենակիցները Թուրքիայի համար երկրորդական, նույնիսկ՝ երրորդական սպառնալիք են։ Եթե Թուրքիային և Ադրբեջանին համատեղ ուժերով հաջողվի ոչնչացնել Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետությունները, հաջորդ օրն իսկ նրանք կճանաչեն Հայոց ցեղասպանությունը, որովհետև ճանաչումն այլևս ոչ մի հետևանքներ չի ունենա Թուրքիայի համար։ Թեկուզ դրանից հետո Ամերիկայի, Եվրոպայի կամ Ավստրալիայի հայությունը ցույցեր և բողոքի միջոցառումներ կազմակերպի՝ այդ ամենն այլևս որևէ նշանակություն չի ունենա։ Հայությունն այլևս ոչինչ չի կարողանա անել, որովհետև չի լինի մի կառույց, պետություն, որին թուրքերը ստիպված կլինեն հաշիվ տալ՝ թե՛ բառացիորեն, և թե՛ փոխաբերական իմաստով։

«Ուղերձի» մեկ այլ կետում ասվում է. *«Ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, որը կազմավորվել է խորհրդայնացված Ռուսական կայսրության երկրորդ փլուզումից հետո՝ Արևելյան Հայաստանի մի մասում՝ Խորհրդային Հայաստանի տարածքում, որ երկու անգամ փոքր է Հայաստանի առաջին Հանրապետության տարածքից, դե յուրե իրավահաջորդը չէ առաջին հանրապետության, լիազորված չէ արևմտահայերի ներկայացուցչական մարմինների կողմից ներկայացնել իրենց շահերը և ի վիճակի էլ չէ ստանձնելու Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ժառանգների ճակատագրին և ապագային առնչվող յուրահատուկ խնդիրների լուծման առաքելությունը»*։

Պետք է նկատենք, որ ՀՀ «Հայաստանի առաջին հանրապետության դե-յուրե իրավահաջորդ» չհանդիսանալու մասին կետը շատ վտանգավոր է, իսկ այս ողջ հատվածն էլ՝ լիովին անճիշտ։ Այդ ինչու՞ ՀՀ-ը չի կարող ստանձնել արևմտահայերի շահերը ներկայացնելու իրավասությունը։ Եթե ելնենք «Ուղերձի» այդ պնդումից, ապա կհանգենք այն եզրակացությանը, որ Արցախը պետք է պաշտպանի արցախցին, Սյունիքը միայն սյունեցին, իսկ Արևմտյան Հայաստանը՝ այդ հողի վրա ապրածների ժառանգները։ Այնինչ Հայրենիքը՝ Հայաստանը մեկն է՝ Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանը, Արցախը, Ջավախքն ու Նախիջևանը՝ բոլորն էլ Հայաստան են. ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեպքում՝ նաև քաղաքականապես, Ջավախքի դեպքում՝ առնվազն ժողովրդագրականորեն, իսկ մյուսների դեպքում՝ պատմականորեն։ Գյումրեցին, վանաձորցին, երևանցին կամ արտերկրում ապրող հայը ճիշտ նույնքան՝ ոչ ավել, ոչ պակաս, ազգային

իրավունքներ ու բարոյական պարտականություններ ունեն, օրինակ, Արցախի նկատմամբ, որքան ինքը արցախցին, որովհետև Արցախը հայի հայրենիք Չայաստանի հողի մի մասն է: Ճիշտ նույնպես էլ, օրինակ, արցախցին է բարոյապես պատասխանատու Երևանի, Գյումրիի, Վանաձորի կամ Վանի հայրենի հողի հանդեպ: Իհարկե, քաղաքական իրադրությունը և առարկայական հանգամանքները կարող են տարբեր ձևեր ու եղանակներ հաղորդել այդ պարտականությունների և իրավունքների կատարմանը:

Եթե մի պահ պատկերացնենք, թե Արևմտյան Չայաստանի վտարանդի իշխանությունն, այնուամենայնիվ, ստեղծվեց, ապա հարկավոր է պարզել, թե արդյո՞ք այդ կառավարությունն ի վիճակի կլինի որևէ դեր խաղալ կամ որքա՞ն լուրջ կընդունվի այն:

Նախ, հայերը բոլորովին կարիք չունեն մի քանի կառավարության. մեզ մեկն էլ միանգամայն բավարար է: Ակնհայտ է, որ արհեստականորեն ստեղծված իշխանությունը չի կարողանա լուրջ դեր խաղալ, քանի որ չի ունենա միջազգայնորեն ճանաչված պետական մարմնի կարգավիճակ կամ պետականության այլ իրավագործություններ (ատրիբուտներ): Մեկ այլ բան է, որ այսօր, ցավոք, ՀՀ կառավարությունը չի ստանձնում Արևմտյան Չայաստանի խնդրով զբաղվելու գործառույթն ու պարտավորությունը: Իրականում, «Ուղերձի» որոշ դրույթներ ինչ-որ առումով համապատասխանում են առաջիկայում ՀՀ կառավարության որոշմամբ ընդունվելիք ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության հետ: Այսինքն, կարելի է ենթադրել, որ մեր պետությունը որոշ չափով հավանություն է տալիս նման նախաձեռնություններին: Այդ մասին է վկայում նաև վերը նշված բարձրաստիճան պաշտոնյաների՝ «Ուղերձի» ստորագրման փաստը, ինչպես նաև «Չայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում հրապարակումը:

ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության շարադրանքում «Արևմտյան Չայաստան» հասկացությունն ընդհանրապես բացակայում է, ինչը բացարձակ սխալ է: Չէ՞ որ Արցախի հիմնահարցը Հայկական հարցի բաղադրամասն է, այդ դեպքում ինչու՞ նրա կողքին չպետք է լինի նաև Արևմտյան Չայաստանի խնդիրը: Արցախի բռնի անջատումը Չայաստանից և բռնակցումն Ադրբեջանին հայոց ցեղասպանության ուղղակի հետևանք էին ճիշտ այնպես, ինչպես Նախիջևանի հայազերծումը: Հետևաբար, եթե ճանաչում են ցեղասպանության փաստը, ապա պետք է հետևողական լինեն և ճանաչեն նաև դրա հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը:

Այս հարցում մեղքի բաժին ունի նաև Չայաստանի կառավարությունը, որը չկարողացավ կամ չցանկացավ ներկայացնել խնդիրը իր ողջ համալիրով և ամբողջության մեջ: Ո՞րն էր Հայոց ցեղասպանության նպատակը: Այն ոչ այնքան հայերի՝ որպես էթնոսի ֆիզիկական բնաջնջումն էր, որքան Չայաստանի ոչնչացումը, մի երկրի, որն ուներ անկախ պետականություն վերահաստատելու ժողովրդագրական, գաղափարական, քաղաքական և մշակութային բոլոր կարողություններն ու հնարավորությունները: **Վերջին հաշվով, հայերի ցեղասպանությունն ուղղված էր Չայաստանի պետության վերականգնման հավանականության դեմ:** Ըստ էության, հայերը բնաջնջվեցին որպես հե՛նց այդ քաղաքական հավանականության ու հնարավորության կրողներ: Արևմտյան Չայաստանից ու Կիլիկիայից դուրս՝ Օսմանյան կայսրության այլ շրջաններում, հայերի ոչնչացումը նմանապես նպատակ ուներ ի չիք անել հայերի հետագա որևէ պահանջները հայոց հողի նկատմամբ: Այսպիսով, նպատակը Չայաստանի ոչնչացումն էր, իսկ միջոցը՝ հայերի բնաջնջումը, նախ և առաջ, **հայոց հողի վրա:** Բնաջնջման ենթարկվեցին հայ ժողովրդի վերնախավը, հասարակական կառուցվածքը, հազարամյակների պատմություն ունեցող՝ կրթության, եկեղեցու և

համայնքային ճյուղավորված համակարգը, այդ հողում ստեղծված հայկական ողջ մշակույթը: Եվ, ամենակարևորը, Ցեղասպանության հետևանքը եղավ հայության հինգհազարամյա կենսատարածքի կորուստը: Հետևաբար, Հայկական հարցը, ըստ էության, մինչև ուղն ու ծուծը տարածքային, հողային հարց է: Եվ Արցախի հարցը, ի վերջո, հողային հարց է: Ներկայացնելով Արցախի հիմնահարցը որպես սոսկ այն բնակեցնող հայերի ինքնորոշման իրավունք, մենք դրանով իսկ թուլացնում ենք մեր դիրքերը բանակցային ճակատում, ինչպես նաև Հայկական հարցի նկատմամբ ընդհանրապես:

Անհրաժեշտ է ճիշտ հասկանալ Հայկական հարցի էությունը, որը կայացել և այժմ էլ կայանում է հայ ժողովրդի իր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում անկախ և ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների ստեղծման մեջ: Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն մեկը՝ հայոց պետականության վերականգնումը եթե ոչ ամբողջ Հայաստանում (350.000 կմ²), ապա առնվազն նրա այնպիսի ընդարձակ մի հողատարածքում, որտեղ հնարավոր է հայոց քաղաքակրթության երկարատև անվտանգ գոյությունն ու զարգացումը: Այլ կերպ ասած, Հայկական հարցը հայության անվտանգության հարցն է, որը պահանջում է երկու նախադրյալի ապահովում. առաջին՝ հայկական լիարժեք և ամուր պետականության ստեղծում, երկրորդ՝ այդ պետականության անվտանգությունն ու կենսունակությունն ամրագրող հողային երաշխիքներ:

Խորհրդային Միության փլուզմամբ Հայկական հարցը «սառցազերծվեց» ու վայրիվերո ընթացք ստացավ: Հայկական հարցի փոխակերպումները ցայտուն կերպով արտահայտվեցին ու շարունակում են արտահայտվել հետևյալ չորս ուղղություններով.

ա) Արցախի հիմնահարցում, ներառյալ Հայաստանի այդ կենսականորեն կարևոր շրջանի ազատագրության համար մղված երեքամյա լայնածավալ պատերազմը,

բ) որևէ առումով պակաս կարևորություն չունեցող՝ վերջերս էլ տեսանելիորեն սրված Ջավախքի հիմնահարցում,

գ) Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումներում, ժխտումներում ու շահարկումներում,

դ) հայ-թուրքական հարաբերություններում, ներառյալ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ հատվածներում հայերի դեմ իրականացված ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրները:

Արդարև, 1988 թ. Հայկական հարցը մի վիճակի մեջ էր, 1991-ին՝ մեկ այլ, 1994-ին մեկ ուրիշ, այժմ՝ զգալիորեն տարբեր:

Այս չորս ուղղությունները շատ փոխկապակցված են, յուրաքանչյուրը պարունակում է մեծ վտանգներ, իսկ պարտությունը նրանցից որևէ մեկում հղի է աղետով ողջ հայության համար:

Ուրեմն՝ հայրենիքը մեկն է և անբաժանելի: Այստեղ երկու կարծիք լինել չի կարող: Խնդիրը՝ քաղաքական և իրավական նպատակահարմարության մեջ է՝ ստեղծել՝ Արևմտյան Հայաստանի կառավարություն, – որն ինքն իրեն կհամարի ՀՀ-ին իրավական առումով հավասարազոր մի մարմին և կփորձի ներկայացնել հայության խնդիրները՝ ելնելով իր սեփական ռազմավարությունից և իրավիճակի գնահատականից, – թե՞ ստեղծել արտերկրում ապրող հայությանը միավորող ներկայացուցչական ծանրակշիռ մարմիններ, որոնք ընդունակ և ի վիճակի կլինեն շատ ավելի արդյունավետորեն օժանդակելու հայության առջև դրված խնդիրների լուծմանը:

Մեր կարծիքով, երկրորդն ավելի նպատակահարմար է: Ասեմ թե ինչու:

Իրավական նպատակահարմարության տեսակետից, պետք է նշենք հետևյալը.

1. ՀՀ բնակչությունն առնվազն կիսով չափ բաղկացած է արևմտահայերի սերունդներից, հետևաբար ՀՀ-ն որևէ լրացուցիչ լիազորության կարիք չունի՝ Արևմտյան Հայաստանի դատը ներկայացնելու համար:

2. Արևմտահայության ստեղծելիք ներկայացուցչական մարմինները երբեք չեն կարող ձեռք բերել այնպիսի բարձր իրավական կարգավիճակ ինչպիսին ունի Հայաստանի Հանրապետությունը որպես անկախ, միջազգայնորեն ճանաչված, գերիշխան (սուվերեն) պետություն: Որպես այդպիսին ՀՀ-ն ունի եզակի իրավունքներ և հնարավորություններ ներկայացնելու այդ խնդիրները միջազգային ասպարեզում, ներառյալ Հաագայի միջազգային դատարանում: Իրավունքներ և հնարավորություններ, որոնք ցածր կարգավիճակ ունեցող որևէ հայկական միավորում, թեկուզ և այն կոչվի խորհրդարան ու կառավարություն, չունեն և չեն կարող ունենալ: Մասնավորապես, որպես 1948 թ. ՄԱԿ-ի ընդունած Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի ստորագրող կողմ (23 հունիս 1993թ.) ՀՀ-ն եզակի իրավունքներ ունի արժարժելու Թուրքիայի դեմ (որը նույնպես ստորագրել է այն՝ դեռ 1950թ. հուլիսի 31-ին) այդ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, որով յուրաքանչյուր կողմ կարող է դիմել ՄԱԿ-ի լիազոր մարմիններին՝ պահանջելով ձեռնարկել այն միջոցները, որոնք այդ կողմի համոզմամբ անհրաժեշտ են ցեղասպանությունը «ճնշելու» համար: Հեղինակավոր մի շարք իրավաբան-միջազգայնագետների, մասնավորապես Հարվարդի համալսարանից իրավագիտության դոկտոր Ալֆրեդ դե Ջայասի կարծիքով, ցեղասպանության «ճնշումը» ենթադրում է ավելի լայն միջոցների կիրառում, քան պարզապես պատժիչ արդարության հաստատումն է: Հանցագործությունը կանխելու համար անհրաժեշտ է հնարավորինս վերացնել դրա հետևանքները: Այդ միջոցները ներառում են ոչ միայն ցեղասպանության մեղավորների պատժումը, այլև վերապրած հետնորդների իրավունքների վերականգնումն ու փոխհատուցումը, այդ թվում, հնարավոր է, նաև տարածքային զիջումների տեսքով:

ՀՀ-ը կարող է կիրառել նաև Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, որը հայտարարում է. *«Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման ու կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով»:*

Թուրքիայի առարկությունները, թե ՀՀ-ն իրավունք չունի պաշտպանելու ցեղասպանություն վերապրածների հետնորդների իրավունքները, անհիմն են, քանի որ ցեղասպանություն վերապրածներից և նրանց հետնորդներից շատերը ՀՀ քաղաքացիներ են (այս համատեքստում կիրառելի են նաև մի շարք այլ նախադեպեր, մասնավորապես՝ Այխմանի գործում Իսրայելի շրջանային դատարանի հղած «Ցեղասպանության մասին օրենքը»): Բացի այդ, ՀՀ-ը կարող է քաղաքացիություն տալ այն բոլոր սփյուռքահայերին, ովքեր կցանկանան ստանալ ՀՀ քաղաքացիություն, այնպես, ինչպես դա արեց Ռուսաստանը ԽՍՀՄ նախկին հանրապետություններում ապրող ու Խորհրդային Միության քաղաքացիներ հանդիսացող ռուսների/ռուսալեզու քաղաքացիների համար:

3. Ինչպե՞ս պետք է արևելահայ սփյուռքահայերը՝ Հայաստանի Հանրապետությունից, Արցախից, Նախիջևանից, Վրաստանից ու Ադրբեջանից գաղթածները, որոնց թիվն այսօր գուցե թե հավասարվել է արևմտահայերի քանակին, մասնակցեն Արևմտյան Հայաստանի ներկայացուցչական մարմինների ստեղծմանը: Այս հարցը բաց է մնում և, հետևաբար, կարող է դառնալ նոր տարածայնությունների ու պառակտումների պատճառ:

Դեռ մեծ հարց է արտակարգ պայմաններում Արցախն անկախ պետություն հռչակելը ճիշտ քայլ էր, թե՞ պետք էր պարզապես հռչակել Արցախի վերամիավորումը ՀՀ-ին: Որքանով է նպատակահարմար հայկական նոր կառավարությունների ստեղծումը, այն էլ արտերկրում, իրական հողից կտրված, երբ արդեն իսկ կա գոնե դե յուրե անկախ ու բոլորի կողմից ճանաչված հայկական պետություն:

Քաղաքական նպատակահարմարության տեսակետից.

1. Որքանով է նպատակահարմար Հայկական հարցի բաղադրամասերի տարանջատումը և «աշխատանքի բաժանում» կատարելը: Արդյո՞ք դրանով չենք թուլացնելու Արցախի, Ջավախքի, Նախիջևանի խնդիրները: Չէ՞ որ անիմաստ է, մի կողմից, ճանաչել ու դատապարտել ցեղասպանությունը, իսկ մյուս կողմից ճանաչել Ադրբեջանի «տարածքային ամբողջականությունը» և հրաժարվել ընդունելու ինչպես արցախահայության ինքնորոշման, այնպես էլ Հայաստանի ապահով ու բնական սահմաններ ունենալու իրավունքները:

2. Եվս մեկ մտավախություն. եթե անգամ ՀՀ-ն՝ իր բոլոր պետական կառույցներով, հայտնվել է օտար ուժերից բավականին ծանր կախվածությունների մեջ, արդյո՞ք արտերկրում ստեղծվելիք Արևմտյան Հայաստանի վտարանդի իշխանությունը նույնպես չի կարող ընկնել նույն ծուղակը և ի՞նչ է պետք անել դրանից խուսափելու համար: Կարծում եմ, այս մասին պետք է մտածել սկզբից և եթե, որպեսզի հետագայում շատ ուշ չլինի:

Վերջապես պետք է նկատի ունենալ նաև հոգեբանական նպատակահարմարությունը: Արցախի օրինակով արդեն իսկ գիտենք, որ Հայաստանի մի մասի՝ մարտավարական նկատառումներով հռչակած անկախությունն ու պետական մարմինների ստեղծումը հանգեցրին ազգային ինքնության որոշակի փոխակերպումների՝ «ղարաբաղից»-«հայաստանցի» հակադրությունների: Նման անցանկալի երևույթները շատ ավելի մեծ ավերածություններ կգործեն հայրենիքից հեռու՝ օտար հողում ու միջավայրում ապրող մեր հայրենակիցների հոգիներում՝ հայելային արտացոլում ստանալով նաև բուն Հայաստանում:

Եթե մինչև ԽՍՀՄ փլուզումը Խորհրդային Հայաստանի ֆիզիկական անվտանգությունն ապահովված էր և միջազգային քաղաքականության մեջ սփյուռքահայության գործունեությունը կարող էր կենտրոնանալ Հայկական ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղության վրա, ապա 1990 թ.-ից ի վեր ստեղծված իրադրությունը պահանջում է այլ մոտեցումներ և գործողություններ, որոնք, ցավոք, ուշանում են: Այդ խնդիրներից է մասնավորապես, հայրենադարձության կազմակերպումը դեպի այսօրվա Հայաստանի Հանրապետություն, այն միակ տարածքը, որտեղ գոյություն ունի հայկական քաղաքական իշխանություն և զինուժ:

Ցավոք, նախաձեռնող խմբի երկրորդ հայտարարության մեջ նույն սխալները կրկնված են՝ Արևմտյան Հայաստանն անվանված է արևմտահայերի հայրենիք, իսկ Հայկական հարցի լուծումը բաժանված է «արևելահայկական և արևմտահայկական տեսակետների» (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16 հունվարի 2007թ.): Հեղինակները նաև խոսում են առայժմ անիրագործելի և երևութական խնդրի մասին. «Արևմտահայերն ու նրանց ժառանգները ձգտում են անարգել և անվտանգ վերադառնալ իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստան»: Այս ձևակերպումը տալիս է հայրենիքի սխալ բնորոշում, որովհետև, կրկնենք, **Արևմտյան Հայաստանը նույն չափով արևելահայերի հայրենիքն է, այնպես, ինչպես Արևելյան Հայաստանը՝ արևմտահայերինը:**

Այդուամենայնիվ, «Ուղերձում» ուրվագծված հարցերը կարևոր են: Հատկապես կարևոր է հիմնական խնդիրը՝ միավորել սփյուռքահայությանը և

ստեղծել ներկայացուցչական մարմիններ: Բայց դա պետք է արվի ոչ թե Հայաստանի որևէ տարածքի (տվյալ դեպքում՝ Արևմտյան Հայաստանի) նկատմամբ հայտարարված քաղաքական հավակնությունների հիման վրա, ինչպես մտադիր են անել «Ուղերձի» հեղինակները, այլ ստեղծելով արտերկրի հայության մի այնպիսի ներկայացուցչական մարմին, որն ի վիճակի կլինի համախմբել ամբողջ Սփյուռքը՝ Հայաստանի որևէ շրջանից արտագաղթածներին, նպատակ ունենալով օժանդակելու համազգային արդիական խնդիրների լուծմանը:

*Արմեն Այվազյան,
քաղաքաքան գիտությունների դոկտոր,
«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն*